ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՍՈՆՆԱ ԱՂԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աղեկյան,

ի պատասխան Ձեր 11.12.2023թ. հ. Ա-Հ/15 գրության՝ տեղեկացվում է.

«Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը մայրաքաղաքում իրականացնում է թափառող կենդանիների գլխաքանակի կանոնակարգման ծրագիր, որն ենթադրում է անտուն, թափառող կենդանիների բռնում, նախնական հետազոտություն, վտանգավոր վարակիչ հիվանդությունների առկայության դեպքում ըստ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի քնեցում, առողջ կենդանիների ստերջացում, պատվաստում կատաղություն հիվանդության դեմ: «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվում է նաև մայրաքաղաքի փողոցներից անկած կենդանիների դիերի հավաքման աշխատանքներ: 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում մայրաքաղաքի փողոցներից հավաքվել և ոչնչացման է ուղարկվել 439 կենդանու դի:

Ստորև ներկայացվում է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից 2022 և 2023 թվականների ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքները.

	2022թ.	2023թ. (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1)
Ընդհանուր թիվ	3710	3270
Ստերջացում և պատվաստում	2159	1945
Վերապատվաստում	612	722
Քնեցում	877	582
Որդեգրություն	153	93

Միաժամանակ տեղեկացվում է, որ մեկնարկել է համայնքային խնամքի կենտրոններ/կացարանների ծրագիրը: Սա ենթադրում է, որ կացարանների կառուցումից հետո թափառող կենդանիները կապրեն կացարաններում՝ ապահովված լինելով անհրաժեշտ բոլոր պայմաններով և մայրաքաղաքի փողոցներում կենդանիների գլխաքանակը էապես կնվազի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ